Ներկայացվել է
«Զինծառայողների ապահովագրության» հիմնադրամի
խորհրդի 2017 թվականի հոկտեմբերի 3-ի նիստին (3-րդ նիստ)

«ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ (ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ) ԱՄՓՈՓՈՒՄ.

«Զինծառայողների ապահովագրության» հիմնադրամի խորհրդի երկրորդ նիստից հետո (03 հունիս, 2017) կատարվել են հետևյալ աշխատանքները.

I. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐ

Նախորդ հաշվետվությունից մինչ օրս Հիմնադրամի կողմից օրենքով սահմանված կարգով կատարվել են թվով 9 հատուցումներ, որոնցից 8՝ զոհված զինծառայողների, 1-ը հաշմանդամ զինծառայողի:
Զոհված 8 զինծառայողներից՝

- 5-ը պարտադիր զինվորական ծառայության կրտսեր ենթասպայական և շարքային կազմերի զինծառայողներ են, որոնցից յուրաքանչյուրին հասանելիք հատուցման գումարը կազմում է 58 մլն. ՀՀ դրամ,
- 1-ը պայմանագրային զինվորական ծառայության ենթասպայական կազմերի զինծառայողներ, որոնց հասանելիք հատուցման գումարը կազմում է 70մլն. ՀՀ դրամ,
- 2-ը սպայական կազմի զինծառայողներ, որոնց հասանելիք հատուցման գումարը կազմում է 82 մլն. ՀՀ դրամ:

Հաշմանդամ զինծառայողը՝

- I խմբի հաշմանդամ, պայմանագրային զինվորական ծառայության ենթասպայական կազմերի զինծառայող է, որին հասանելիք հատուցման գումարը կազմում է 70մլն. ՀՀ դրամ

Շահառուների անունով բացվել է 9 հաշիվ, որոնցից 4-ը՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ում և 4-ը՝ «Կոնվերս բանկ» ՓԲԸ-ում և 1-ը՝ «Արցախբանկ» ՓԲԸ-ում՝ պայմանավորված շահառուների հաշվառման կամ բնակության հասցեներով, ինչպես նաև բանկերի՝ կոնկրետ մասնաճյուղ մոտենալու շահառուի ցանկությամբ:

Կարեն Ուլուբաբյանի դեպքով տեղի է ունեցել շահառուի փոփոխություն: Հատուցման տրամադրման պահին որպես շահառու հանդես եկավ կրտսեր սերժանտ Ուլուբաբյանի մայրը: Սակայն մոր մահվան կապակցությամբ անհրաժեշտություն առաջացավ իրականացնել շահառուի փոփոխություն: «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Օրենքի 2-րդ հոդվածի համաձայն ծնողների, ամուսնու և երեխաների բացակայության դեպքում շահառու կարող են լինել նաև զինծառայողի հատուցման դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ 18 տարին չլրացած կամ անգործունակ ճանաչված կամ մինչև 23 տարեկան առկա ցերեկային ուսուցմամբ սովորող ուսանող քույրը և եղբայրը: Այս դեպքում կրտսեր սերժանտ Ուլուբաբյանը ուներ 18 տարին չլրացած քույր և 21 տարեկան ցերեկային ուսուցմամբ սովորող եղբայր: Վերջիններս ներկայացրեցին դիմում, որի հիման վրա Հիմնադրամը գրանցեց շահառուի փոփոխություն: Հաշվի առնելով քրոջ և եղբոր համաձայնությունը՝ Հիմնադրամը հատուցման ամբողջ գումարը փոխանցում է քրոջը:

II. ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ՆՈՐ ԵՂԱՆԱԿՆԵՐ

1. Նվիրաբերությունների հավաքագրում նամականիշերի միջոցով:

«Հայփոստ» ՓԲ ընկերության հետ համագործակցության արդյունքում թողարկվել են 500 դրամ արժողությամբ նամականիշներ և 11450 ՀՀ դրամ արժողությամբ փոստային նամականիշներ՝Հիմնադրամի լոգոյով: Նամականիշների մարման արարողությունը տեղի ունեցավ Հայաստան-Սփյուռք համաժողովի ժամանակ և ներկայումս նամականիշերն արդեն իսկ շրջանառության մեջ են: Նամականիշների վաճառքից հավաքագրված գումարները փոխանցվում են հիմնադրամին հետևյալ համամասնություններով՝ 500 դրամ արժողությամբ նամականիշներից 150 դրամը, 11450 դրամ արժողությամբ փոստային նամականիշներից՝ 10000 դրամը: Առ այսօր վաճառվել է 11450 դրամ արժողությամբ 51 նամականիշ և 500 դրամ արժողությամբ 330 նամականիշ: Հիմնադրամին հասանելիք գումարը կազմում է 559,500 ՀՀ դրամ:

2. Նվիրաբերություններ կարճ հաղորդագրության միջոցով

ՀՀ օպերատորի հետ պայմանագրերը բանակցման փուլում են:
ՌԴ-ում նվիրաբերությունների իրականացումը հնարավոր դարձնելու նպատակով Հիմնադրամի աշխատակիցները ուսումնասիրել են շուկան: Ուսումնասիրությունների արդյունքում Հիմնադրամը ներկայացնում է ՌԴ-ում հնարավոր գործընկերների և վերջիններիս տարիֆների ամփոփ ցանկ: Հիմնադրամը նաև իրականացնում է ՌԴ հնարավոր գործընկերների հավուր պատշաճի ուսումնասիրություն:

«Սոյուզ Տելեկոմ»			
Ամսական սպասարկում	Հիմնադրամի անունով կարճ համար	Յուրաքանչյուր նվիրաբերությունից պահվող տոկոսադրույք	Ամսական նվիրաբերությունների ծավալը < 4,100,000
575,000	~3,500,000	1,5% + օպերատորի տոկոսադրույք (≤ 3.5%)	29,028 ամսական վճար

«ՍՄՍ Օնլայն»			
Ամսական սպասարկում	Հիմնադրամի անունով կարճ համար	Յուրաքանչյուր նվիրաբերությունից պահվող տոկոսադրույք	Բաժանորդի կողմից ուղարկվող յուրաքանչյուր SMS
485,000	~ 3,000,000	8%	16

*Գները նշված են ՀՀ դրամով:

Կարծում ենք ավելի նպատակահարմար է համագործակցել «ՍՄՍ օնլայն» ընկերության հետ, քանի որ վերջինս ավելի վստահելի է և հաճախ համագործակցում է հեղինակավոր հիմնադրամների հետ. Օրինակ՝ ՌԴ գտնվող «Կոնստանտին Խաբենսկիի» Բարեգործական Հիմնադրամի հետ:

Բացի այդ Հիմնադրամի ստեղծման փաստաթղթերը և կայքը ուսումնասիրելուց հետո «ՍՄՍ Օնլայն» ընկերությունը պատրաստակամություն է հայտնել աշխատելու Հիմնադրամի հետ:

3. Նվիրաբերություններ տերմինալների միջոցով

Արդեն իսկ հնարավոր է նվիրաբերություններ իրականացնել «EASYPAY» ընկերության տերմինալների միջոցով: 2 շաբաթից հնարավոր կլինի նաև նվիրաբերություններ իրականացնել «IDRAM» և «TelCell» ընկերությունների տերմինալների միջոցով: Բոլոր օպերատորների հետ արդեն իսկ կնքվել են պայմանագրեր:

4. Նվիրաբերությունների իրականացումը էլեկտրոնային քսակի միջոցով:

ՀՀ Կառավարությունը ս.թ. օգոստոսի 3-ին ընդունած իր որոշմամբ թույլատրել է ՌԴ-ում, ԱՄՆ-ում և Գերմանիայում գտնվող ՀՀ դեսպանություններին, ինչպես նաև Լոս Անջելեսում գնտվող ՀՀ գլխավոր հյուպատոսությանը համապատասխան երկրներում բացել հաշիվներ՝ «Զինծառայողների ապահովագրության» հիմնադրամի համար նվիրաբերությունների հավաքագրումը հնարավոր դարձնելու նպատակով: Այդ հաշիվների բացմամբ այդ պետությունների հայ համայնքները կկարողանան նվիրաբերությունների ի ռականացնել օգտագորելով «PayPal» էլեկտրոնային քսակը: Կառավարության որոշման համաձայն Հիմնադրամը և ԱԳ-ի նախարարությունը պետք է կնքեն պայմանագիր, որով կսահմանվեն համագործակցության շրջանակները: Պայմանագիրն արդեն իսկ կնքված է:

III. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

1. Պատրաստվել են Հիմնադրամի գործունեությունը ներկայացնող տեղեկատվական գրքույկներ և թերթիկներ
2. Հիմնադրամը համագործակցության խնդրանքով դիմել է Սփյուռքի նախարարություն: Արդյունքում Սփյուռքի նախարարությանը ուղղարկվել են Հիմնադրամի գործունեությունը ներկայացնող տեղեկատվական նյութեր, որոնք Սփյուռքի նախարարությունը հանձն է առել տարածել Սփյուռքում գործող հայկական կառույցներին: Համաձայնություն է ձեռք բերվել նաև Սփյուռքի նախարարության կայքում տեղադրելու հիմնադրամի լոգոն՝ համապատասխան հղումով:
3. Հիմնադրամն իր գործունեության մասին տեղեկատվություն տարածել է նաև մի շարք թերթերում և պարբերականներում անվճար գովազդներ տեղադրելու միջոցով: Գովազդները տեղադրվել են հետևյալ թերթերում և պարբերականներում.
    - ֆրանսիական «Նոյան-Տապան» շաբաթաթերթում
    - ֆրանսիական «Նուվել դ՛Աղմենի» շաբաթաթերթում
    - Բոստոնյան «Արմենիան Միրրոր Սպեքթեյթոր» թերթում

IV. www.1000plus.am ԿԱՅՔԻ ՎՐԱ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

1. Կայքի մշակման աշխատանքներ

Նախորդ խորհրդի նիստից հետո իրականացվեցին կայքի մշակման լրացուցիչ հետևյալ աշխատանքները.

- Նվիրաբերությունների էջում նկար և ուղերձ ավելացնելու հնարավորությունը
- Նվիրաբերությունները, ըստ մեծության, դասակարգելու հնարավորությունը
- Ամսական նվիրաբերողների էջ

Նաև «Հելիքս Քոնսոլթինգ» ընկերության հետ բանակցվել է «Ի պատիվ» և «Ի հիշատակ» նվիրաբերությունների իրականացման հնարավորությունը և այլ տեխնիկական խնդիրների լուծումը:
Աշխատանքները կկատարվեն եռամսյա ժամկետում:

V. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇԵՐ - 01 հունվար, 2017 – 1 հոկտեմբեր, 2017

	Գումար	Տոկոս
Հատուցումներ	267,200,000	100
Շարքային և կրտսեր ենթասպա	151,000,000	57
Ենթասպա	49,600,000	19
Սպա	66,600,000	25
Պարտադիր վճարներ	4,061,009,256	
Նվիրաբերություններ	67,125,968	100
Կայքի միջոցով	9,935,383	15
Բանկային փոխանցմամբ	57,190,585	85

VI. ԴՐՈՇՄԱՆԻՇԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՈՒՄ՝ ԸՍՏ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՄԱՁԱՅՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵԿ-ԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ

	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս
Կազմակերպությունների կողմից վճարված գումար	471,483մլն.	473,798մլն	482,495մլն	466,479մլն	453,160մլն	418,148մլն.	370,932մլն	49,292,000
Վճարող կազմակերպությունների	27,101	27,228	27,148	26,229	25,244	23,862	19,810	5,356
Վճարող աշխատակիցների քանակ	471,483	473,798	482,495	466,479	453,160	418,148	370,932	49,292

VII. ԿԱՏԱՐՎԱԾ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ



VIII. Հաջորդ նիստին կներկայացվեն

1. Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամի պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, հետգնման, շրջանառության և մարման կարգ

2. Լրացուցիչ գումար ստանալու իրավունք տվող հիմքերի վերաբերյալ տեղեկությունների հաշվառման կարգ,

3. Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամի ներքին աուդիտի 2018 թվականի տարեկան պլանը

IX. ԸՆԹԱՑՔԻ ՄԵՋ ԳՏՆՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

	Աշխատանք	Աշխատանքի արդյունք
1	Պատրաստվում է ՊԵԿ-ի և Հիմնադրամի միջև փաստաթղթաշրջանառությունը (դրոշմանիշային վճարներ վճարողների ցուցակների փոխանակումը) առավել դյուրին դարձնող էլեկտրոնային համակարգ (Web Service)1.	Ծրագրավորման և տեղադրման աշխատանքները ՀՀ ԿԲ-ում իրականացված են: ՀՀ ԿԲ-ը ՀՀ Կառավարությանն առընթեր ՊԵԿ-ի հետ միասին կանցկացնի համակարգի թեստավորում, որից հետո համակարգը կգործարկվի: Նախատեսվում է համակարգը գործարկել նոյեմբերի 15-ից:
2	Հաշվիչի ավտոմատացում: Հիմնադրամի կայքում առկա է «կատարված հատուցումներ» հաշվիչը: Այս հաշվիչն արտացոլում է այդ պահին Հիմնադրամի կողմից կատարված հատուցումների հանրագումարը: Այս պահին հաշվիչն ավտոմատացված չէ, համապատասխանաբար ձեռնարկվել են հաշվիչի ավտոմատացումն ապահովելու աշխատանքներ:	Աշխատանքները կավարտվեն Հոկտեմբերի 30-ին
3	Վերադարձերի համակարգի ստեղծում: Հունվար-փետրվար ամիսներին դրոշմանիշային վճարների վերադարձ կազմակերպելու համար (երկու կամ ավելի գործատուների մոտ աշխատելու դեպքում, պարտադիր ժամկետային ծառայության մեջ գտնվող կամ զոհված որդի, ամուսին, եղբայր ունենալու դեպքում) տարվում են աշխատանքներ ինչպես ՀՀ Կառավարությանն առընթեր ՊԵԿ-ի, այնպես էլ ՀՀ Պաշտպանության նախարարության հետ:	